

ԻՆՉՈ՞Ւ ԿԱՄՈՎԻՆ ԶԻՋԵԼ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ե.Հ. Գևորգյան

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պեդագոգական մանկավարժական համալսարանի հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր, բանասիրական գիտությունների դոկտոր

Հանգուցային բառեր և արտահայտություններ. բրայլյան համակարգ, մեծատառերի բացակայություն, իմաստային շփոթություններ, երկու նոր գրանշանների ներդրում:

Սույն հոդվածում մենք ցանկանում ենք քննության առնել մի խնդիր, որը տասնամյակներ շարունակ մտահոգել է մտավոր աշխատանքով հայ չտեսնողներին, մասնավորապես՝ գիտաշխատողներին, մանկավարժներին ու հատուկ կրթության ֆակուլտետի ուսանողներին: Այն պատճառ է դարձել հակադարձ կարծիքների՝ ունենալով սակավաթիվ կողմնակիցներ ու մեծաթիվ մերժողներ: Առաջնորդվելով 'Լավ է ուշ, քան՝ երբեք' սկզբունքով, ի վերջո գեթ բանավիճային կարգով, հարկ համարեցինք խնդիրը ներկայացնել մամուլում՝ ենթադրելով, որ կլինեն թեր և դեմ հոդվածներ ու վերջնական պարզություն կմտցվի խնդրի լուծման հարցում:

Ինչի մասին է խոսքը: Հայերենի գրության բրայլյան համակարգում մեծատառեր չեն գործածվում կամ գրեթե չեն գործածվում, բացառությամբ մի քանի որոշակի դեպքերի: Ամեն ինչ ու ամենուրեք գրվում

է փոքրատառերով: Այսպես է եղել ի սկզբանե, դեռևս երբ երահան Նիկողայոս Տիգրանյանը անցյալ դարի 20-ական թվականների սկզբներին լատինական ու ռուսական այբուբենները հարմարեցնում էր հայերենին [1]: Դեռ խոսք կլինի այն մասին, թե ինչու մեծատառերի գործածության հարցում նա հետևեց ռուսերենին, որտեղ նույնպես մեծատառեր չկան, և ոչ՝ արտասահմանյան լեզուներ, որոնցում, թեև ոչ բացարձակ կերպով (օր. յուրաքանչյուր նախադասություն չի սկսվում մեծատառով), բայց մեծատառերով գրելու կանոնների մեծագույն մասը գործածության մեջ է: Մեծատառով են գրվում հապավումները, հատուկ անունները... Մեր ձեռքի տակ է հունգարերեն - էսպերանտո բրայլյան մի բառարան՝ տպված Հունգարիայում, որտեղ բառացանկերում հատուկ անունները գրված են մեծատառով, մինչդեռ Ռուսաստանում տպված բրայլյան անգլո-ռուսերեն բառարանում երկու լեզվում էլ հատուկ անունները սկսվում են փոքրատառով [2; 3]:

Այսպիսով, քանի որ հայերենի բրայլյան համակարգում մեծատառեր գրեթե չկան և գրքերն ու դասա-

գրքերը տպագրվում են միայն փոքրատառերով, ուստի ուղղագրության համապատասխան բաժինը դպրոցական ծրագրերում չկա, համարվում է ավելորդ ու չի դասավանդվում: Միջնակարգն ավարտած չտեսնողների մի մասը չի շարունակում ուսումը, մի մասն էլ սովորում է ոչ հասարակագիտական ֆակուլտետներում, որտեղ ուղղագրության դասավանդումը պրոֆիլային չէ: Մնում են բանասերները, որոնք առաջին անգամ են ծանոթանում մեծատառերի գործածության կանոններին: Բայց միայն տեսականորեն: Այնուհետև գործնականում նրանք մեծատառերին ոչ հանդիպում են գրքեր կարդալիս և ոչ էլ կիրառում գրելիս: Իսկ այն, ինչ գործնականում մշտապես չկա, արագորեն մոռացվում է, նույնիսկ յուրացրած ամբողջ լեզուն, էլ ուր մնաց թե՛ մի քանի կանոն: Եվ ահա արդյունքը լինում է այն, որ բացառությամբ Հայաստանի կույրերի միավորման հրատաակության մի քանի աշխատակիցների և գիտությամբ զբաղվողների, մենք ուղղագրության նշված բաժինը չենք յուրացնում: Թող մեզ ներեն ընթերցողները, եթե ասենք, որ մեր կատարած հարցումների համաձայն ամենևին էլ ոչ բոլոր (նույնիսկ մտավոր աշխատանքովն քով զբաղվող) չտեսնողները գիտեն, որ մեծատառով են սկսվում Փարիզյան կոմունա, Նոր տարի, Երկրորդ համաշխարհային պատերազմ բառակապակցությունները, որովհետև նշում են համաշխարհային կարևորության իրադարձություններ, և կամ, որ Արշակ Երկրորդ, Աշոտ Ողորմած, Պիպին Կարճահասակ բաղադրյալ անունների ոչ միայն առաջին, այլև

երկրորդ բաղադրիչները, թեև գոյականներ են, այլ համապատասխանաբար՝ թվական, դերբայ, ածական, նույնպես գրվում են մեծատառով, որովհետև նշում են անձանց բնորոշ հատկանիշներ և հատուկ կանոնների մաս են կազմում: Ինչպիսի իրավիճակների կարող են բերել չիմացության այսպիսի դեպքերը դժվար չէ ենթադրել: Ահա դրանցից երկուսը: Երեխան չտեսնող բուհավարտ ծնողից հարցնում է այս կամ այն բառի մեծատառով գրվել-չգրվելու մասին... 2) Գործընկերները քննարկում են մեծատառով գրության որևէ կանոն. և նրանցից մեկը, որի կարծիքն ուզում են իմանալ, տեղյակ էլ չէ նյութի էությունից..

Բայց թողնենք հարցի հուզական կողմը և տեսենք, թե մեզանում, գործնականում, մեծատառերի անտեսումը ինչ շփոթությունների և անհարմարությունների է հանգեցնում: Դիմենք փաստերին: Արձակ խոսքում, շարադրվող նյութի պահանջով, հաճախ մեջբերվում են բանաստեղծության տողեր: Եթե դրանք քիչ են, օրինակ՝ երկուսը, ընդհանուր խոսքաշարից չեն անջատվում բաց թողնվող տողով ու չեն գրվում չափածոյին բնորոշ առանձին բանատողերով, այլ մեջբերվում են անմիջապես արձակ հոծ շարադրանքում: Քանի որ յուրաքանչյուր բանատող սկսվում է մեծատառով, ընթերցողը տարբերում է որտեղ է վերջանում առաջինը, որտեղ է սկսվում երկրորդը: Բրայլյան գրությամբ մեծատառեր չկան, ուստի բանատողերի զատումը դժվարանում է. արդյոք գործ ունենք մեկ, թե՞ երկու բանատողի հետ: Մանավանդ, եթե բանաստեղ-

ծությունն անծանոթ է: Չէ՞ որ հեղինակի մտահղացմամբ պայմանավորված, բանատողերը կարող են երկար լինել, նույնիսկ շատ երկար, ինչպես Ավ. Իսահակյանի Աբու-Լալա Մահարի պոեմում՝ հիշեցնելով ուղտերի քարավանի ձգվածությունն ու դանդաղ ընթացքը [4]:

Չափածոյում բանաստեղծություններ են լինում կարճ, երկար, կտրտված, սկզբից կամ խորքից գրվող բանատողերով, նույնիսկ մեկ բառը՝ մեկ բանատող (Չարենց, Մայակովսկի....): Փաքրատառով գրությունը հնարավորություն չի տալիս որոշելու մի բանատողի սկիզբն ու վերջը:

Բազմաթիվ անձնանուններ առաջացել են հասարակ գոյականներից: Մեծատառի բացակայության պարագայում, որոշակի խոսքաշարերում, հարց է առաջանում՝ մեր առջև հատուկ անուն է, թե՞ հասարակ: Ահա խոսքաշարից դուրս առաջարկում ենք նախադասություն: Ինձ ամենից շատ (<)հասմիկն է դուր գալիս: Ինչո՞ւ էր Կ(կ)որյունը անհանգիստ, հիվանդ էր: Որոշեցինք հանդիպել Ա(ա)րշալույսին: Չի կարելի վստահորեն պնդել՝ դրանցում խոսքերը մարդկանց մասին է, թե՞ ծաղկի, կենդանու, օրվա հատվածի: Այստեղ մեզ կարող են առարկել, թե խոսքաշարում դժվարություն չկա, անորոշության դեպքում մեկ-երկու նախադասություն հետո ընթերցողը կռահում է իսկությունը: Բանն էլ հենց այդ է: Ընթերցողին չպիտի զբաղեցնել կռահումներով. ամեն ինչ պետք է լինի պարզ ու միանշանակ: ՀԿՄ հրատարակչությունը մեսրոպյան տպագրությունից բրայլյան համակարգով արտատպել է

Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու ժողովածուն [5]: Մեծատառերին վերաբերող բաժնին ծանոթանալը պահանջում է մշտական լարվածություն, կռահելու ընդգծված ընդունակություն, որովհետև խոսքաշարում մեծատառեր չկան. կանոնները պահանջում են մի բան, լուսաբանող օրինակները ցույց են տալիս հակառակը: Որոշ կանոններ ունեն կետեր, որոնց մի մասը հանձնարարում է մեծատառով գրվող բառեր, մյուս մասը՝ փոքրատառով: Երկու դեպքում էլ օրինակները գրված են նույն կերպ՝ փոքրատառերով: Պետք է կարողանալ շփոթը հաղթահարել: Եվ հետո. լինում են խոսքաշարեր, որտեղ նախադասության իմաստից բառի անորոշությունը չի պարզվում մեկանգամյա գործածության պատճառով, հաճախ էլ՝ նույնիսկ մի քանի նախադասության մեջ գործածված լինելու դեպքում: Երևանի՝ հատուկ դպրոցի կույր երեխաների դպրոցական ծրագրում Հովհ. Թումանյանի Թագավորն ու չարչին ստեղծագործության հետևյալ տողերը գրված էին այսպես. 'Խնչ է արել շահը ձեզ վատ... բերել է ձեզ առատ փարիա, աչքն էլ քաղցր միշտ ձեզ վրա' [6]: Իսկ ի՞նչ է նշանակում փարիա, որն առատ բերել էր շահը: Հարցնում ենք ուսուցչուհուն: Խոստանում է պատասխանել հաջորդ օրը: Ո՛չ հաջորդ օրը, ո՛չ էլ ուրիշ օր չի պատասխանում: Մենք էլ հարկ չենք համարում նորից հարցնելու: Բայց ի՞նչ է նշանակում փարիա: Տարիներ սպասեցինք, մինչև որ բանասիրական ֆակուլտետում սովորելիս բալլադը մեզ համար կարդացին մեսրոպյան հրատարակությամբ: Փարիան

գրված էր... մեծատառով: Այսպես ուրեմն, եթե բրայլյանում էլ այն լիներ մեծատառով, պարզ կլիներ, որ բնականաբար է Պարսկաստանում, ուր շահը բնակեցրել էր հայերին՝ տեղահանելով Զուլայից:

Այլ օրինակ. Յարոսլավ Հաշեկի 'Քաջ զինվոր Շվեյկի արկածները' վեպի բրայլյան հրատարակությունում կա մի հատված, որտեղ հիշվում են զինվորական ավստրոհունգարական կոչումներ և անձնուններ. 'Վագոնի դռների առաջ կանգնած էր պրոֆուր... լավ մարդ էր պրոֆուր': Պարզ չի դառնում, պրոֆուր մարդու անուն է, թե՞ զինվորական կոչում: Համեմատում ենք մետրոպատառ հրատարակության հետ. այստեղ գրված է փոքրատառով: Ուրեմն՝ անձնանուն չէ: Փնտրում ենք օտարլեզվյան բառարաններում. նշանակում է բանտային վերակացու: Մեծատառերի անհրաժեշտության մասին խոսող փաստերի շարքն առայժմ սահմանափակենք մի ակնառու օրինակով: Վերջերս մեզ հանձնարարված էր 'Գարեգին Նժդեհի ստեղծագործություններին բնորոշ լեզվաոճական միջոցները' գիտական թեման: Ուսումնասիրությունը սկսեցինք Գարեգին Նժդեհ գրքի բրայլյան տպագրության երկու հատորով [7]: Քանի որ աշխատանքի պահանջով Գ. Նժդեհի ողջ գրական ժառանգությունը պիտի կարդայինք մի քանի անգամ, որոշեցինք Նույն գործերը կարդալ մետրոպայան տպագրության Հատընտիր-ում, որտեղ, ի տարբերություն մյուս հրատարակությունների, հեղինակի լեզուն անձեռնմխելի է մնացել [8]:

Եվ ղվ զարմանք: [8]: Պարզվում

է՝ Նժդեհը, մեզ համար հասարակ թվացող հարյուրավոր գոյականներ, նույնիսկ ածականներ, գրում է մեծատառով՝ Հայրենիք, Անկախություն, Ազատամարտ..., Մետերլինգյան, նույնիսկ ժողովուրդների աուններ, երբ խոսքը նրանց մշակույթի, ազատաբաղձության մասին է՝ Հույնը, Հռոմեացին, Չեխը, Լեհը, Մակեդոնացին, Հայը..., որոշակի բառակապակցություններում՝ բոլոր բաղադրիչները. Մեծ Տառապանք, Գրչի Մարդ, Ցեղի Ոգի... Նախադասություններ կան, որտեղ բառերի մի զգալի մասը մեծատառով են... Նժդեհը ներկայացավ նորովի: Բրայլյան համակարգով ընթերցողն այդպես էլ մնում է անտեղյակ ու անհաղորդ հեղինակի գրելաոճի սույն կողմին: Մինչդեռ Նժդեհը մեծատառերի է դիմում նպատակամղումով՝ համապատասխան բառը հատուկ ընդգծելու, ընթերցողի ուշադրությունը հրավիրելու, ակնածանք ու գնահատանք արտահայտելու համար: Նույն այս նպատակով ենք մենք առօրյայում գործածում Մարդ մեծատառով արտահայտությունը: Ուրեմն մեծատառով գրությունը զուտ լեզվական նկատառումներից բացի, որոնք հանրահայտ են, ունի բարոյահոգեբանական, եթե կուզեք, նաև դաստիարակչական նշանակություն: Ինչպե՞ս կարելի է միակերպ փոքրատառերով գրել (մեղամեր մեծերին, մեղա՛ մեր սրբավայրերին) Մետրոպ Մաշտոց, Վարդան Մամիկոնյան, Գրիգոր Նարեկացի, Խաչատուր Աբովյան, Գարեգին Նժդեհ, Հովհաննես Թումանյան, Արամ Խաչատրյան, Շարլ Ազնա-

վուր, ապա նաև՝ Էջմիածին, Տարոն, Ավարայր, Անի, Երևան, Արարատ և առօրյա հասարակ գոյականներ, ասել է, թե նույն ջերմությունն արտահայտել թե՞ առաջինների, թե՞ վերջինների նկատմամբ: Թող ների մեզ ընթերցողը այս հանրահայտ ճշմարտությունները հարկադրված կերպով մեկ անգամ ևս կրկնելու համար:

Եվ չնայած վերը նշված և շատ այլ փաստարկների, որոնցից մի քանիսին ևս շուտով կանդադառնանք, փոքրատառերով գրելու կողմնակիցները մերժում են մեծատառերի գործածությունը՝ բերելով հետևյալ առարկությունները:

ա. Փոքրատառերով գրելը բերում է տեղի, թղթի, ուրեմն և ծախսերի խնայողություն: Չէ՞ որ, օրինակ, յուրաքանչյուր նախադասության սկզբնատառից առաջ պետք է դնել մեծատառի նշան կամ նույնը հապավումների ամեն բաղադրիչից առաջ:

Բայց այսպես առարկողները նժարների վրա դրե՞լ են մի քանի թերթ խնայելու օգտակարությունը և թերի գրագիտության և բարոյափոփոխական վնասը: Երկրորդ նժարը, իհարկե, շատ ավելի ծանր է: Այդպիսի գնով խնայողությունը իրականում շահեկան չէ, մանավանդ որ ինչպես կտեսնենք բ. կետում, մեծատառերի գործածությունը ամենևին էլ միշտ չէ, որ հանգեցնում է լրացուցիչ ծախսերի:

բ. Մեծատառերի գործածությունը շփոթությունների տեղիք կտա, խիստ կոճվարացնի ընթերցանությունը: Օրինակ՝ վերնագրերի, հապավումների բոլոր տառերը մեծատառ են. ինչպե՞ս կարելի է բազմաթիվ

տառերից առաջ դնել մեծատառի նշանը և ինչպե՞ս կարդալ գրածը:

Նախ, ինչպպես վերը տեսանք, ոչ պակաս, նունիսկ իմաստային շփոթությունների պատճառ է դառնում ամեն ինչ միայն փոքրատառով գրելը: Եվ ապա. իհարկե, ընթերցելիս անհարմություններ կառաջանան, եթե նախադասության մեջ յուրաքանչյուր տառից առաջ մեծատառի նշան դրվի: Մանկավարժական պետական համալսարանի ուսանողները, բրայյան համակարգը սովորելիս, մշտապես զարմանում են. 'Ինչպե՞ս կարելի է մեծատառեր չգործածել, փոքրատառերով գրել վերնագրերը... փոքրատառով սկսել թելադրությունը...': Նրանք նույնպես նկատում են, որ ուղղագրական պահանջի դեպքում ամեն տառից առաջ մեծատառի նշան դնելը, մեղմ ասած, անհարմար է: Ուստի մենք ուսանողների հետ որոշեցինք.

- Եթե բառի միայն առաջին տառն է գրվում մեծատառով, սկզբնատառից առաջ դնել 4, 6 կետերում գրվող գրանշանը:
- Եթե բառի կամ բառակազմության բոլոր տառերն են գրվում մեծատառով, միայն առաջին բառի սկզբնատառից առաջ դնել 3, 5 կետերում գրվող գրանշանը:
- Եթե ամբողջ նախադասության, օրինակ վերնագրի, բոլոր տառեն են մեծատառ, ապա միայն առաջին բառի առաջին տառից դնել վեց կետիկ՝ 1, 2, 3, 4, 5, 6 կետերում գրվող գրանշանը:

Թեև վերջին երկու գրանշանների կիրառությունը պաշտոնապես հաստատված չէ, բայց մենք դրանք համալսարանում գործածում ենք՝ մեզ

համար մեծ օգուտով. թե՞ ընթերցանությունը չի խոչընդոտվում, թե՞ շատ տեղ չի պահանջվում:

- . Եթե մեծատառերի գործածությունն անհրաժեշտություն լիներ, առաջինը կընդունեին Ռուսաստանում ու Նախկին Խորհրդային Միության մյուս հանրապետություններում:

Բրայլյան համակարգը ռուսական կայսրություն մուտք գործեց 1880-ական թվականներից, երբ համատարած անգրագիտություն էր, առավել ևս շտենոզների շրջանում: Հարկավոր է բացարձակապես կրթություն չունեցող շտենոզ մարդկանց, մեծ մասամբ տարիքն առաձներին, գրագիտություն սովորեցնել: Նպատակահարմար էր հնարավորինս պարզունակ նյութ մատուցել, անտեսել գրության հետ կապված ինչ-ինչ նրբություններ. դրանցից էին մեծատառերը: Խոսքաշարը գրվում էր մեկընդմեջ բաց թողնվող տողերով, մի տառը մյուսից զատվում էր մեկ չգրված վանդակով... 1885թ. այսպես տպագրվեց առաջին ռուսերեն բրայլյան գիրքը [9]: Կայսրության մյուս ժողովուրդները (ավելի քան 40 տարի անց՝ Խորհրդային հանրապետությունները) նույն դժվարություններն ունեին, եթե ոչ ավելին, ուստի հետևեցին ռուսների օրինակին: Բայց նշված սկզբնական ժամանակներից ավելի քան 130 տարի է անցել:

Չտեսնողներն ստանում են նվազագույնը միջնակարգ կրթություն: Բարձրագույն կրթությունը սովորական երևույթ է: Այժմ գրում են մանր ու խիտ կամ շատ խիտ կետիկներով: Արտասահմանում գրքերը տպագրվում են նաև ուղղագրական համակարգով: Իսկ մեզանում մեծատառի հարցը թափընթացով նույնն է մնացել: Բայց ինչո՞ւ ընդօրինակել սխալը, թերին՝ ամեն ինչ փոքրատառերով (ուղղագրական, ավելի ճիշտ՝ սխալագրական) կողմնորոշումը: Գործածության մեջ դնենք մեծատառերը, և թող ռուսներն ու մյուսները հետևեն մեզ, ընդօրինակեն ճիշտն ու գիտականը: Թե ինչպիսի վերաբերմունք ունեն ռուսները դեպի իրենց Ա. Նևսկին, Պյոտր Առաջինը, Մ. Լոմոնոսովը, Ա. Պուշկինը, Պ. Չայկովսկին, Դ. Մենդելեևը, Ի. Կուրչատովը կամ ուրիշ ժողովուրդներ իրենց մեծերն ու սրբավայրերը, այդ իրենց գործն է: Թող գրեն փոքրատառով: Բայց մենք նույն կերպ չենք կարող ու չպիտի առաջվա գրելաձևը շարունակենք: Արդ, սույն հոդվածով ԵՊՄՀ Հատուկ կրթության և հոգեբանության ամբիոնը քննարկված խնդրի լուծման առաջին քայլն է կատարում՝ նպատակ ունենալով պատրաստելու այնպիսի տիֆլոմանկավարժներ, որոնք չթերանալով մեծատառերի ուղղագրության մեջ, նույնը կպահանջեն իրենց աշակերտներից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ստեփանյան Ա. Ս., Ազատյան Ռ. Ն., Ստեփանյան Տ. Ս., Նիկողոսյան, Տիգրանյան, Զանգակ-97 հրատ., Եր., 2009:

2. Magyar – Eszperanto szótár, Eszperanto – Magyar szótár (բրայլյան), Budapest, 1958:

3. Англо-русский словарь, под ред. О. С. Ахмановой, Москва, изд. Просвещение, 1952 (по Брайлю)

4. Իսահակյան Ավ., Արու-Լալա Մահարի, Հայաստան հրատ., Երևան, 1974, հ. 2, էջ 53-79: Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, խմբագրությամբ Հ. Խ.

5. Բարսեղյանի, Եր., 1979թ., 3-րդ գիրք, էջ 123-137 (բրայլյան):

6. Թումանյան Հովհ., Հայաստան, հրատ., Երևան, 1969, հ. 1, էջ 309:

7. Հաշեկ Յարոսլավ, 'Քաջ զինվոր Շվեյկի արկածները', (թրգմ. Ս. Վահունի), Երևան, 1973թ.:

8. Գարեգին Նժդեհ, Երկեր, Արխիվային գործի գործակալություն հրատ., Երևան, 2002, 1, 2, հրատ (բրայլյան):

9. Գարեգին Նժդեհ, Հատընտիր, Ամարաս հրատ., Երևան, 2006թ.:

10. Адлер Анна, Сборник статей для детского чтения, посвященный слепым детям, 1885г. (по Брайлю).

РЕЗЮМЕ

ПОЧЕМУ ДОБРОВОЛЬНО УСТУПАТЬ В ПИСЬМЕННОСТИ?

Է. Ս. Գեвоրկյան

профессор кафедры специальной педагогики и психологии Армянского государственного педагогического университета имени Хачатуря Абовяна, доктор филологических наук

В армянском языке в системе Брайля большие буквы не употребляются, что приводит к путаницам и смысловым неопределенностям. Кроме того, в отличие от обыденных слов писать с большими буквами имена великих людей и сокровенных мест имеет патристическое, психологическое и воспитательное значение. Чтобы избежать вопросов экономии места и трудностей при чтении, мы предлагаем ставить знак :

- если только первая буква слова пишется с большой буквой, перед сло-

вом (поставить знак пишущейся в точках 4, 6).

- если все буквы слова пишутся с большими буквами, как например в аббревиатурах, (перед словом поставить знак пишущейся в точках 3, 5).
- если все буквы предложения пишутся с большими буквами, как например в заглавиях (перед первым словом поставить шеститочие – пишущееся в точках 1, 2, 3, 4, 5, 6)

SUMMARY
WHY VOLUNTARY CONCEDE IN WRITING?

E.H. Gevorgyan

Doctor of Philological Sciences, Professor at the Chair of Special Pedagogy and Psychology Khachatur Abovyan Armenian State Pedagogical University

In Armenian Braille system capital letters aren't used that leads confusions and semantic uncertainities. Besides, unlike ordinary words to write names of great people and secret places with capital letters has patriotic, psychological and educational value. To avoid questions of economy of a place and difficulties of reading, we suggest to put a sign:

- if only the first letter of the word is written with capital letter, before the word (to put a sign written in points 4, 6).
- if all letters of the word are written with capital letters, such as in abbreviations, (before the word to put a sign written in points 3, 5).
- if all letters of the offer are written with capital letters, such as in titles (before the first word to put the six points – written in points 1, 2, 3, 4, 5, 6).